

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր եւ արտաքին կապերի բաժին

17 JUL 2017

ժամ « 16 » հուլիս 2018 թ No 1789 - Ա

Կից ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՒՍՏԵՐ ԼԵՀԱՍՏԱՆ ՍՊ.Ձ Օ.Օ., ՈՒԼ. ԳՐԱՆԻՉՆԱ 35, ԳՐԱՆԻՉՆԱ 35, ԳՐՈՂԳԻՍԿ ՄԱՂՈՎԵՑԻ, 05-825» ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ «ՆՈՐՏԻՎԱՆ, ՎԱԼՍԱՐՏԱՆ, ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱԿԱՏ, 80ՄԳ, ԲԼԻՍՏԵՐՈՒՄ (30/3X10/))» ԵՎ «ՆՈՐՏԻՎԱՆ, ՎԱԼՍԱՐՏԱՆ, ԴԵՂԱՀԱՏԵՐ ԹԱՂԱՆԹԱԿԱՏ, 160ՄԳ, ԲԼԻՍՏԵՐՈՒՄ (30/3X10/))» ԴԵՂԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԲՈԼՈՐ ՍԵՐԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԵՏՀԱՎԱՔԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի բ. կետը, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 11-ի N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 2018 թվականի հուլիսի 10-ի թիվ 0105099818 գրությունը, համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող «Նորտիվան, վալսարտան, դեղահատեր թաղանթապատ, 80մգ, բլիստերում (30/3x10/))» և «Նորտիվան, վալսարտան, դեղահատեր թաղանթապատ, 160մգ, բլիստերում (30/3x10/))» դեղերի ակտիվ նյութը պարունակող վալսարտան դեղանյութում հայտնաբերվել է դեղագրքերով հաստատված կողմնակի խառնուրդներից տարբերվող դիմեթիլնիտրոզամին կողմնակի նյութը, որը կարող է ունենալ գենաթունային և քաղցքկեղածին ազդեցություն:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել Լեհաստանի «Գեդեոն Ռիխտեր Լեհաստան Սպ.զ օ.օ., ուլ. Գրանիչնա 35, Գրողգիսկ Մազովեցկի, 05-825» դեղագործական ընկերության արտադրության «Նորտիվան, վալսարտան, դեղահատեր թաղանթապատ, 80մգ, բլիստերում (30/3x10/))» և «Նորտիվան, վալսարտան, դեղահատեր թաղանթապատ,

Հավել. 17. 07. 18 Ն. 12⁴⁵ Սեւ.

160մգ, բյուստերում (30/3x10/))» դեղերի Հայաստանի Հանրապետություն ներմուծված բոլոր սերիաների շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. «Ռիխտեր—Լամբրոն» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

Ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղերի շրջանառության դադարեցումը:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

4. Դեղերի մեծածախ իրացմամբ զբաղվող, դեղատնային գործունեություն իրականացող, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ անհապաղ դադարեցնել Լեհաստանի «Գեդեոն Ռիխտեր Լեհաստան Սպ.գ օ.օ., ուլ. Գրանիչնա 35, Գրոդզիսկ Մազովեցկի, 05-825» դեղագործական ընկերության արտադրության «Նորտիվան, վալսարտան, դեղահատեր թաղանթապատ, 80մգ, բյուստերում (30/3x10/))» և «Նորտիվան, վալսարտան, դեղահատեր թաղանթապատ, 160մգ, բյուստերում (30/3x10/))» դեղերի Հայաստանի Հանրապետություն ներմուծված բոլոր սերիաների շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում:

5. ՀՀ ԱՆ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի տնօրեն Հ.Թոփչյանին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված դեղի շրջանառությունը դադարեցնելու և շրջանառությունից հանելու (հետկանչի) գործընթացի համակարգումը և արդյունքների մասին պարբերաբար տեղեկացնել ՀՀ առողջապահության նախարարությանը:


6. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել մասնագիտական և պաշտոնական զանգվածային լրատվության միջոցներում համապատասխան տեղեկատվության հրապարակումը:

7. ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ Ջ. Դարբինյանին սույն հրամանը 3-օրյա ժամկետում պատշաճ ձևով պատվիրված փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ ուղարկել վարչական վարույթի մասնակիցներին:

8. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

17.07.2018

X 

VERIFIED OCSP 17.07.2018 10:52:14 GMT+4

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ